ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

______Հայոց լեզվի և գրականության____
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __8__

«_23_» ____հունվար__ 2024թ.

# ՀԼԳ/Բ-067 «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /նորագույն-1/» ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** **011401.00.6** Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **011401.19.6** Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** ______ առկա ______________________________
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա __3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ____

**Դասախոս(ներ)՝** ______Գայանե Պապյան______________________
/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ՝ **mls152213@gmail.com**

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Հայ գրականության պատմություն (նորագույն 1)» առարկայի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակն է օգնել ուսանողներին առավել ամբողջական դարձնելու հայ գրականության զարգացման յուրահատկությունների բացահայտումն ու իմաստավորումը, համաշխարհային գրականության զարգացման միտումների հետ հարաբերվելու խնդիրը և հայ գրականության առանձին իրողությունների ավանդութային դրսևորման հանգամանքի բացահայտումը:

**2.2.** Դասընթացի խնդիրներն են՝

- բացահայտել հայ գրականության առանձնահատկությունները, նրա զարգացման փուլերը՝ կապված երկրի պատմության շրջադարձային աստիճանների հետ,
- նրա աղերսները ռուս, համաշխարհային գրականությունների հետ,
- ուսանողությանը հարստացնել տեսական և գործնական անհրաժեշտ գիտելիքներով,
- նրան զինել ապագա գործունեության ընթացքում ուղեցույց մեթոդիկայով:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/.**

«Հայ գրականության պատմություն (նորագույն 1)» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների հիմնավոր գիտելիքների առկայությունը հայ գրականության պատմության նախորդ շրջաններից, ռուս և արտասահմանյան գրականության պատմությունից և գրականագիտությունից, ինչպես նաև՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, ինքնուրույն վերլուծություններ կատարելու հմտությունների առկայությունը:

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«Հայ գրականության պատմություն (նորագույն 1)» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

**Իմանան՝**

- 20-րդ դարասկզբի գրականության հիմնական ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունները.
- նորագույն գրականության հիմնական գեղարվեստական ուղղության առանձնահատկությունները.
- նորագույն հայ գրականության տեսափիլիսոփայական հիմքերը, ժանրային հատկանիշները.
- պատմամշակութային, ոճական, անհատական-ստեղծագործական համատեքստերը՝ առանձին գեղարվեստական տեքստերի ուսումնասիրության համար:

**Կարողանան՝**

- բացահայտել դարասկզբի գրականության զարգացման դոմինանտ կողմերը.
- սևեռվել առաջադրված տիպաբանական-վերլուծական շրջանակներում՝ գեղագիտական, ժանրային, թեմատիկ և այլն.
- կատարել համեմատական դիտարկումներ՝ առնչություն գտնելով գրականության գործընթացների և դրանց պատմական հիմքերի միջև.
- առանձին հեղինակների ստեղծագործություններն արժևորել գրական գործընթացի մեջ:

**Տիրապետեն՝**

- 20-րդ դարի գեղարվեստական տեքստերի գրականագիտական վերլուծության հիմնական մեթոդներին.
- հայ գրականության զարգացման յուրահատկություններին.
- հայ գրականության տեսական և գործնական, փաստացի արժեհամակարգին:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

<u>Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

<u>ԳԿ1</u> վերլուծելու և սինթեզելու ունակություն,
<u>ԳԿ4</u> մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
<u>ԳԿ9</u> խնդիրների լուծում,
<u>ԳԿ10</u> որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

<u>ՀԳԿ1</u> գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

<u>ՀԳԿ2</u> հետազոտություններ կատարելու ունակություններ,
<u>ՀԳԿ3</u> սովորելու ունակություն,
<u>ՀԳԿ8</u> ինքնուրույն աշխատելու ունակություն,

<u>Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>

<u>ԱԿ2</u> հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
<u>ԱԿ4</u> ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
<u>ԱԿ6</u> կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
<u>ԱԿ11</u> տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
<u>ԱԿ14</u> տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

## *5.* Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Հայ գրականության պատմություն (նորագույն 1)» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառելմասնագիտական գործունեության ընթացքում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և բանասիրության և մանկավարժության բնագավառներում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

## *6.* Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | **5 կրեդիտ/150 ժամ** |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ |
|---|---|
| Դասախոսություն | 32 |
| Գործնական աշխատանք | 40 |
| Ինքնուրույն աշխատանք | 78 |
| **Ընդամենը** | 150 |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | ընթացիկ քննություն (բանավոր կամ գրավոր) |

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները[4]</u> .

---

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել :

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

- <u>**Ռեֆերատ**</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- <u>**Էսսե**</u> – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- <u>**Կլոր սեղան**</u> – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- <u>**Ինքնուրույն աշխատանք համացանցում**</u> – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- <u>**Զեկույց**</u> – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

**10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[6].**

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | |
|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | գործնական աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ: | 2 | 2 | 8 |
| 2. | Եղիշե Չարենց | 8 | 10 | 14 |
| 3. | Ակսել Բակունց | 4 | 4 | 8 |
| 4. | Դերենիկ Դեմիրճյան | 4 | 4 | 8 |
| 5. | Գուրգեն Մահարի | 4 | 4 | 8 |
| 6. | Ստեփան Զորյան | 4 | 4 | 8 |
| 7. | Նաիրի Զարյան | 2 | 4 | 8 |
| 8. | Վահան Թոթովենց | 2 | 4 | 8 |
| 9. | Հովհաննես Շիրազ | 2 | 4 | 8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 32 | 40 | 78 |

[6] Նման է օրացուցային պլանին:

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Սովետահայ գրականության պատմություն 1,2 հատորներ | 1984 |
| 2. | Ս. Աղաբաբյան, Սովետահայ գրականության պատմություն | 1965 |
| 3. | Հր. Թամրազյան, Եղիշե Չարենց | 1987 |
| 4. | Մ. Սանթոյան, Էպիկական կերպարի ստեղծման չափումները | 2006 |
| 5. | Դ. Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը | 1994 |
| 6. | Դ. Գասպարյան, Ողբերգական Չարենցը | 1990 |
| **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | | |
| 1. | Մ. Սանթոյան, Ա. Սանթոյան «Գրականագիտական բառարան» | |
| 2. | Ազատ Եղիազարյան, Պատմության երգեհոնը | 2007 |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Գրականություն[7] |
|---|---|---|---|---|
| 1. | Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ: | Քաղաքական կյանք,<br>Գրական ուղղություններ<br>Գրական հիմախնդիրների գրականության բովանդակության, գրական լեզվի, ոճի մասին քննարկումներ<br>Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ: | 2 | ՊԳ1, 2 |
| 2. | Եղիշե Չարենց | Կյանքը: Ստեղծագործության շրջանները:<br>Ազգային գրականության ավանդների ժառանգումը:<br>Չարենցը և ժամանակի գրական հոսանքները:<br>Սիմվոլիզմի ազդեցությունը առաջին շարքերի վրա:<br>Երազի փլուզումն ու հակադրությունը «Դանթեական առասպել» | 8 | ՊԳ1, 2, 3, 5, 6<br>ԼԳ 2 |

[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պոեմում:<br>«Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմներն իբրև հեղափոխական ռոմանտիզմի արտահայտություն:<br>Հեղափոխության և հայ ժողովրդի ազատագրության հարցերի մարմնավորման նոր եղանակները:<br>«Տաղարանը» իբրև հայ դասական պոեզիայի լուրջ նվաճում:<br>«Էպիկական լուսաբաց» ժողովածուն (1930) իբրև նոր շրջան:<br>Տեսական նոր դրույթների դրսևորումները չափածո նովելներում:<br>«Գիրք ճանապարհի» ժողովածուն:<br>Չարենցի անտիպ ժառանգությունը: | | |
| 3. | Ակսել Բակունց | Կյանքը և գրական գործունեությունը: «Մթնաձոր» ժողովածուն (1927), «Սև ցելերի սերմնացանը» (1933): Գեղեցիկի Բակունցյան ընկալումը:<br>«Միրհավը», «Ալպիական մանուշակը» իբրև նորավեպի դասական նմուշներ:<br>Պատումի յուրահատկությունը:<br>Բակունցը ժողովուրդների բարեկամության երգիչ («Եղբայրության ընկուզենիները»):<br>«Կյորես» (1936) քրոնիկոնը:<br>Բակունցի ազդեցությունը հայ արձակի վրա: | 4 | ՊԳ1, 2, 4 |
| 4. | Դերենիկ Դեմիրճյան | Կյանքը և գրական գործունեությունը:<br>Վաղ շրջանի պատմվածքները: Սեփականատիրական աշխարհը և մարդկային էության աղճատումը:<br>Դեմիրճյանի դրամատուրգիական:<br>«Քաջ Նազարը»:<br>Պատմական և քաղաքական խնդիրները «Վարդանանք» պատմավեպում: | 4 | ՊԳ1, 2 |
| 5. | Գուրգեն Մահարի | Մահարու (Գուրգեն Աճեմյան) կյանքը: Որբանոցային օրերը և առաջին ոտանավորների միստիկական տրամադրությունները:<br>«Մանկություն» (1929), «Պատանեկություն» (1930) և «Երիտասարդության սեմին» (1355) եռագրությունը: «Ծաղկած փշալարեր» վեպը:<br>«Այրվող այգեստաններ» վեպը:<br>Վրիպումները ազատագրական պայքարի և դիմադրական շարժման մեկնաբանությունների մեջ: | 4 | ՊԳ1, 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Մահարու արձակի լեզվա-ոճական առանձնահատկությունները: | | |
| 6. | Ստեփան Զորյան | Կյանքը և գրական գործունեությունը:<br>Հասարակական ընդգրկումների լայնացումը «Ցանկապատ», «Խնձորի այգին» և «Պատերազմ» ժողովածուներում:<br>Զորյանի պատմական վեպերը: Չորրորդ դարի դրամատիզմով հարուստ կյանքի արտացոլումը, «Պապ թագավոր», «Հայոց բերդը», «Վարազդատ» եռագրության մեջ: | 4 | ՊԳ1, 2 |
| 7. | Նաիրի Զարյան | Մանկության և որբանոցային տարիները:<br>«Արա Գեղեցիկ» առասպելի մշակումը: Կերպարների հոգեբանական գեղարվեստական արժեքը:<br>Զարյանի դրամաներն ու կատակերգությունները: | 2 | ՊԳ1, 2 |
| 8. | Վահան Թոթովենց | Վահան Թոթովենցի կյանքը և գրական գործունեությունը:<br>«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպը | 2 | ՊԳ1, 2 |
| 9. | Հովհաննես Շիրազ | Կյանքը և գրական գործունեությունը: Առաջին գիրքը «Գարնանամուտ» (1935):<br>Պատկերավորման արվեստը:<br>«Բիբլիական» պոեմը: Մարդու և բնության փոխհարաբերության խնդիրը: Կյանքի ու մահվան, բնության ու մարդու մասին խոհերը:<br>«Քնար Հայաստանի» եռահատոր ժողովածուն:<br>Մոր կերպարը Շիրազի պոեզիայում: «Հուշարձան մայրիկիս» (1968) ժողովածուն: | 2 | ՊԳ1, 2 |

## 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | Ժամաքանակ | Ստուգման ձևը | Գրականություն[8] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ: | Քաղաքական կյանք,<br>Գրական ուղղություններ<br>Գրական հիմախնդիրների գրականության բովանդակության, գրական լեզվի, ոճի մասին քննարկումներ<br>Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ: | 2 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 2. | Եղիշե Չարենց | Կյանքը: Ստեղծագործության շրջանները:<br>Ազգային գրականության ավանդների ժառանգումը:<br>Չարենցը և ժամանակի գրական հոսանքները:<br>Սիմվոլիզմի ազդեցությունը առաջին շարքերի վրա:<br>Երազի փլուզումն ու հակադրությունը «Դանթեական առասպել» պոեմում:<br>«Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմներն իբրև հեղափոխական ռոմանտիզմի արտահայտություն:<br>Հեղափոխության և հայ ժողովրդի ազատագրության հարցերի մարմնավորման նոր եղանակները:<br>«Տաղարանը» իբրև հայ դասական պոեզիայի լուրջ նվաճում:<br>«Էպիկական լուսաբաց» ժողովածուն (1930) իբրև նոր շրջան:<br>Տեսական նոր դրույթների դրսևորումները չափածո նովելներում:<br>«Գիրք ճանապարհի» ժողովածուն:<br>Չարենցի անտիպ ժառանգությունը: | 10 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 3, 5, 6<br>ԼԳ 2 |

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Ակսել Բակունց | Կյանքը և գրական գործունեությունը: «Մթնաձոր» ժողովածուն (1927), «Սև ցելերի սերմնացանը» (1933): Գեղեցիկի Բակունցյան ընկալումը:<br>«Միրհավը», «Ալպիական մանուշակը» իբրև նորավեպի դասական նմուշներ:<br>Պատումի յուրահատկությունը:<br>Բակունցը ժողովուրդների բարեկամության երգիչ («Եղբայրության ընկուզենիները»):<br>«Կյորես» (1936) քրոնիկոնը:<br>Բակունցի ազդեցությունը հայ արձակի վրա: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 4 |
| 4. | Դերենիկ Դեմիրճյան | Կյանքը և գրական գործունեությունը:<br>Վաղ շրջանի պատմվածքները: Սեփականատիրական աշխարհը և մարդկային Էության աղճատումը:<br>Դեմիրճյանի դրամատուրգիական:<br>«Քաջ Նազարը»:<br>Պատմական և քաղաքական խնդիրները «Վարդանանք» պատմավեպում: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 5. | Գուրգեն Մահարի | Մահարու (Գուրգեն Աճեմյան) կյանքը: Որբանոցային օրերը և առաջին ոտանավորների միստիկական տրամադրությունները:<br>«Մանկություն» (1929), «Պատանեկություն» (1930) և «Երիտասարդության սեմին» (1355) եռագրությունը:<br>«Ծաղկած փշալարեր» վեպը:<br>«Այրվող այգեստաններ» վեպը:<br>Վրիպումները ազատագրական պայքարի և դիմադրական շարժման մեկնաբանությունների մեջ:<br>Մահարու արձակի լեզվա-ոճական առանձնահատ-կությունները: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 6. | Ստեփան Զորյան | Կյանքը և գրական գործունեությունը:<br>Հասարակական ընդգրկումների լայնացումը «Ցանկապատ», «Խնձորի այգին» և «Պատերազմ» ժողովածուներում:<br>Զորյանի պատմական վեպերը: Չորրորդ դարի դրամատիզմով հարուստ կյանքի արտացոլումը, «Պապ թագավոր», «Հայոց բերդը», «Վարազդատ» եռագրության մեջ: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | Նաիրի Զարյան | Մանկության և որբանոցային տարիները: «Արա Գեղեցիկ» առասպելի մշակումը: Կերպարների հոգեբանական գեղարվեստական արժեքը: Զարյանի դրամաներն ու կատակերգությունները: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 8. | Վահան Թոթովենց | Վահան Թոթովենցի կյանքը և գրական գործունեությունը: «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպը | 4 | | ՊԳ1, 2 |
| 9. | Հովհաննես Շիրազ | Կյանքը և գրական գործունեությունը: Առաջին գիրքը «Գարնանամուտ» (1935): Պատկերավորման արվեստը: «Բիբլիական» պոեմը: Մարդու և բնության փոխհարաբերության խնդիրը: Կյանքի ու մահվան, բնության ու մարդու մասին խոհերը: «Քնար Հայաստանի» եռահատոր ժողովածուն: Մոր կերպարը Շիրազի պոեզիայում: «Հուշարձան մայրիկիս» (1968) ժողովածուն: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |

## 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Աշխատանքի տեսակը[9] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Եղիշե Չարենց. «Դանթեական առասպել» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 3, 5, 6<br>ԼԳ 2 |
| 2. | Եղիշե Չարենց. «Երկիր Նաիրի» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 3, 5, 6<br>ԼԳ 2 |

[9] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը:
[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3. | Եղիշե Չարենց. «Ծիածան» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 3, 5, 6<br>ԼԳ 2 |
| 4. | Եղիշե Չարենց. «Գիրք ճանապարհի» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 3, 5, 6<br>ԼԳ 2 |
| 5. | Ակսել Բակունց. «Կյորես» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 4 |
| 6. | Ակսել Բակունց. «Մթնաձոր» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 4 |
| 7. | Ակսել Բակունց. «Սև ցելերի սերմնացանը» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2, 4 |
| 8. | Դերենիկ Դեմիրճյան. «Քաջ Նազար» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 9. | Դերենիկ Դեմիրճյան. «Գիրք ծաղկանց» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 10. | Գուրգեն Մահարի. «Մանկություն» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 11. | Գուրգեն Մահարի. «Ծաղկած փշալարեր» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 12. | Գուրգեն Մահարի. «Այրվող այգեստաններ» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 13. | Ստեփան Զորյան. «Պատերազմ» ժողովածու | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 14. | Ստեփան Զորյան. «Պապ թագավոր» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15. | Նաիրի Զարյան. «Արա Գեղեցիկ» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 16. | Վահան Թոթովենց. «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |
| 17. | Շիրազ. «Բիբլիական» | Ռեֆերատ | Կիսամյակի ավարտին | Բանավոր հարցում | ՊԳ1, 2 |

### 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[11]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | - |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

[11] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[12]:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ :

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[12]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

**14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)**

1. Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, հայ գրականության մեջ:
2. Դարասկզբի գրական ուղղությունները՝ իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ:
3. Չարենցը և ժամանակի գրական հոսանքները:
4. Սիմվոլիզմի ազդեցությունը Չարենցի առաջին շարքերի վրա:
5. Երազի փլուզումն ու հակադրությունը «Դանթեական առասպել» պոեմում:
6. «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմներն իբրև հեղափոխական ռոմանտիզմի արտահայտություն:
7. Հեղափոխության և հայ ժողովրդի ազատագրության հարցերի մարմնավորման նոր եղանակները:
8. «Տաղարանը» իբրև հայ դասական պոեզիայի լուրջ նվաճում:
9. «Էպիկական լուսաբաց» ժողովածուն (1930) իբրև նոր շրջան: «Գիրք ճանապարհի» ժողովածուն:
10. Չարենցի անտիպ ժառանգությունը:
11. Բակունցի «Մթնաձոր» ժողովածուն (1927):
12. Բակունցի «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուն (1933):
13. «Միրհավը», «Ալպիական մանուշակը» իբրև նորավեպի դասական նմուշներ:
14. Բակունցի «Կյորես» քրոնիկոնը:
15. Սեփականատիրական աշխարհը և մարդկային էության աղճատումը Դ. Դեմիրճյանի պատմվածքներում:
16. Դ. Դեմիրճյան. «Քաջ Նազար»:
17. Պատմական և քաղաքական խնդիրները «Վարդանանք» պատմավեպում:
18. «Մանկություն» (1929), «Պատանեկություն» (1930) և «Երիտասարդության սեմին» (1355) եռագրությունը:
19. «Ծաղկած փշալարեր» վեպը:
20. «Այրվող այգեստաններ» վեպը:
21. Ս. Զորյանի ժողովածուները. «Ցանկապատ»:
22. Ս. Զորյանի ժողովածուները. «Խնձորի այգին»:
23. Ս. Զորյանի ժողովածուները. «Պատերազմ»:
24. Ս. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպը:
25. Ն. Զարյան. «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:
26. Հ. Շիրազի «Բիբլիական» պոեմը:

<u>Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)</u>

**▪ Ընդգրկված հարցեր.**

- Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, հայ գրականության մեջ:
- Դարասկզբի գրական ուղղությունները՝ իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ:
- Չարենցը և ժամանակի գրական հոսանքները:
- Սիմվոլիզմի ազդեցությունը Չարենցի առաջին շարքերի վրա:

- Երազի փլուզումն ու հակադրությունը «Դանթեական առասպել» պոեմում:
- «Սոմա» և «Ամբոխները խելագարված» պոեմներն իբրև հեղափոխական ռոմանտիզմի արտահայտություն:
- Հեղափոխության և հայ ժողովրդի ազատագրության հարցերի մարմնավորման նոր եղանակները:
- «Տաղարանը» իբրև հայ դասական պոեզիայի լուրջ նվաճում:
- «Էպիկական լուսաբաց» ժողովածուն (1930) իբրև նոր շրջան: «Գիրք ճանապարհի» ժողովածուն:
- Չարենցի անտիպ ժառանգությունը:
- Բակունցի «Մթնաձոր» ժողովածուն (1927):
- Բակունցի «Սև ցելերի սերմնացանը» ժողովածուն (1933):
- «Միրհավը», «Ալպիական մանուշակը» իբրև նորավեպի դասական նմուշներ:
- Բակունցի «Կյորես» քրոնիկոնը:

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկված հարցեր.**
- Սեփականատիրական աշխարհը և մարդկային էության աղճատումը Դ. Դեմիրճյանի պատմվածքներում:
- Դ. Դեմիրճյան. «Քաջ Նազար»:
- Պատմական և քաղաքական խնդիրները «Վարդանանք» պատմավեպում:
- «Մանկություն» (1929), «Պատանեկություն» (1930) և «Երիտասարդության սեմին» (1355) եռագրությունը:
- «Ծաղկած փշալարեր» վեպը:
- «Այրվող այգեստաններ» վեպը:
- Ս. Զորյանի ժողովածուները. «Ցանկապատ»:
- Ս. Զորյանի ժողովածուները. «Խնձորի այգին»:
- Ս. Զորյանի ժողովածուները. «Պատերազմ»:
- Ս. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպը:
- Ն. Զարյան. «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:
- Հ. Շիրազի «Բիբլիական» պոեմը:

## 14.4. Գնահատման չափանիշները[13].

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ ստուգման ժամանակ:
- Գործնական աշխատանքները՝ չորս հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ.:
- Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:

[13] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** **011401.00.6** Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **011401.19.6** Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՀԼԳ/Բ-067 «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /նորագույն-1/»</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">5 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">3-րդ տարի, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="4">Ժամերի բաշխումը</td><td rowspan="2">Լսարանային</td><td rowspan="2">72</td><td>Դասախոսություն</td><td>32</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>40</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">78</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">150</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ընթացիկ քննություն (բանավոր կամ գրավոր)</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Դասընթացի նպատակն է օգնել ուսանողներին առավել ամբողջական դարձնելու հայ գրականության զարգացման յուրահատկությունների բացահայտումն ու իմաստավորումը, համաշխարհային գրականության զարգացման միտումների հետ հարաբերվելու խնդիրը և հայ գրականության առանձին իրողությունների ավանդության դրսևորման հանգամանքի բացահայտումը:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Գիտելիք<br>Իմանան՝<br>• 20-րդ դարասկզբի գրականության հիմնական ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունները.<br>• նորագույն գրականության հիմնական գեղարվեստական ուղղության առանձնահատկությունները.<br>• նորագույն հայ գրականության տեսափիլիսոփայական հիմքերը, ժանրային հատկանիշները.<br>• պատմամշակութային, ոճական, անհատական-ստեղծագործական համատեքստերը՝ առանձին գեղարվեստական տեքստերի ուսումնասիրության համար:<br><br>Հմտություն<br>Կարողանան՝<br>• բացահայտել դարասկզբի գրականության զարգացման դոմինանտ կողմերը.<br>• սևեռվել առաջադրված տիպաբանական-վերլուծական շրջանակներում՝ գեղագիտական, ժանրային, թեմատիկ և այլն.<br>• կատարել համեմատական դիտարկումներ՝ առնչություն</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | գտնելով գրականության գործընթացների և դրանց պատմական հիմքերի միջև.<br>• առանձին հեղինակների ստեղծագործություններն արժևորել գրական գործընթացի մեջ:<br><br>*Կարողունակություն*<br>**Տիրապետեն՝**<br>• 20-րդ դարի գեղարվեստական տեքստերի գրականագիտական վերլուծության հիմնական մեթոդներին.<br>• հայ գրականության զարգացման յուրահատկություններին.<br>• հայ գրականության տեսական և գործնական, փաստացի արժեհամակարգին: |
| **Դասընթացի բովանդակությունը** | *Թեմա 1.* Դարասկզբի գրական ուղղությունները՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, իմաժինիզմ, ակմեիզմ, հայ գրականության մեջ:<br>*Թեմա 2.* Եղիշե Չարենց<br>*Թեմա 3.* Ակսել Բակունց<br>*Թեմա 4.* Դերենիկ Դեմիրճյան<br>*Թեմա 5.* Գուրգեն Մահարի<br>*Թեմա 6.* Ստեփան Զորյան<br>*Թեմա 7.* Նաիրի Զարյան<br>*Թեմա 8.* Վահան Թոթովենց<br>*Թեմա 9.* Հովհաննես Շիրազ |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | ▪ Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ ստուգման ժամանակ :<br>▪ Գործնական աշխատանքները՝ չորս հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:<br>▪ Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ: |
| **Գրականություն** | *Պարտադիր*՝<br>Սովետահայ գրականության պատմություն 1,2 հատորներ<br>Ս. Աղաբաբյան, Սովետահայ գրականության պատմություն<br>Հր. Թամրազյան, Եղիշե Չարենց<br>Մ. Սանթոյան, Էպիկական կերպարի ստեղծման չափումները<br>Դ. Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը<br>Դ. Գասպարյան, Ողբերգական Չարենցը<br><br>*Լրացուցիչ*՝<br>Մ. Սանթոյան, Ա. Սանթոյան «Գրականագիտական բառարան»<br>Ազատ Եղիազարյան, Պատմության երգեհոնը |